ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 փետրվարի 2023 թվականի N 215- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱ-ԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N 1910-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգերը, կանոնները և գերեզմանի վկայականի ձևը սահմանելու մասին» N 1910-Ն որոշման N 6 հավելվածում՝

1) 3-րդ կետը «տապանաքարի» բառից հետո լրացնել «, հուշասյան» բառով.

2) 3.1-ին կետը «սահմանված կարգով» բառերից հետո լրացնել «և սույն որոշման N 3 ձևի համաձայն» բառերով.

3) 6-րդ կետի «բ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ. մահարձանի պատրաստման և տեղադրման, ինչպես նաև գերեզմանի բարեկարգման աշխատանքների իրականացման համար մշակվում է էսքիզային նախագիծ (պատվիրակվում է գերեզման օգտագործողի հայեցողությամբ)՝ համաձայն NN 1 և 2 ձևերով սահմանված չափորոշիչների: Էսքիզային նախագծով առաջարկված տարբերակի իրականացման համար ֆինանսական միջոցների հաշվարկը չպետք է գերազանցի 2277.41 հազ. դրամ հաստատագրված գումարը:».

4) սույն կարգի N 1 ձևը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ձև N 1

Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների գերեզմանի բարեկարգման հարաչափեր

Ձև N 1
ՀՀ կառավարություն 2023 թվականի
փետրվարի 16-ի N 215 -Ն որոշում

Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների գերեզմանի բարեկարգման հարաչափեր



ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

* *բոլոր չափերը տրված են միլիմետրերով*

* *տրված են հարաչափերի առավելագույն մեծությունները*

».

5) սույն կարգը N 1 ձևից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ NN 2 և 3 ձևերով.

«Ձև N 2

Ձև N 2
ՀՀ կառավարություն 2023 թվականի
փետրվարի 16-ի N 215 -Ն որոշում

Մահարձանի, հուշասյան, հուշաքարի հարաչափեր





ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

* *բոլոր չափերը տրված են միլիմետրերով*

* *տրված են հարաչափերի առավելագույն մեծությունները*

Ձև N 3

Ձև N 3
ՀՀ կառավարություն 2023 թվականի
փետրվարի 16-ի N 215 -Ն որոշում

Հուշատախտակի հարաչափեր



ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
** բոլոր չափերը տրված են միլիմետրերով*
** տրված են հարաչափերի առավելագույն մեծությունները*

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

17.02.2023

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ